

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.108>

Armenian delegations and the problem of patronage of Armenia

Larisa Manukyan

<https://orcid.org/0009-0007-7605-5189>

ASUE Department of Social Sciences, Lecturer of Armenian History

manukyan.larisa.sahaky@mail.ru

Keywords: World War, League of Nations, Paris Conference, Avetis Aharonyan, Boghos Nubar Pasha, patronage (mandate), Woodrow Wilson, San Remo, Armenian delegations, legally binding verdict

“The times became the robbers of my nation.”

Avetis Aharonyan

On November 11th 1918, after the end of World War I, the world continued to be complex, full of many contradictions and unresolved issues. The victory of the Allied Entente states in the World War gave the right to sign peace treaties with the losing side and to resolve all political issues after the end of the war. For that purpose on January 18th 1919 the big states called a special conference in Paris (Versailles), which continued intermittently until January 21st 1920.

In 1919, by the decision of the Paris Peace Conference, a special organization, the League of Nations, was created in order to maintain international peace and develop cooperation between nations. It was adapted to the political aspirations of the big states, “from the very beginning it created injustice and inequality”. The organization established a system of administrative management (patronage), which was to be applied to Armenia as well. The Armenian state, formed as a result of the disintegration of Ottoman Turkey, had to benefit from the protection of the state that took the patronage (mandate) under the supervision of the League of Nations.

Armenia was not officially invited to the Paris Peace Conference because it was not recognized as a warring party. But during the preparation of the peace treaty with Turkey by the great powers, in connection with the discussion and solution of the Armenian question, two Armenian delegations were in Paris, delegation of the Republic of Armenia headed by Avetis Aharonyan and National delegation headed by Boghos Nubar Pasha. The delegations were actively engaged in many problems related to the Armenian issue. The question was which state was interested in taking over Armenia's patronage in that difficult historical period. On the other hand, it was extremely important that the patronage of which great state

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 108-123

Received: 09.06.2024

Revised: 07.07.2024

Accepted: 29.08.2024



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

the representatives of our delegations, the RA government, Western Armenians, public, political, and national figures would prefer, and whether it was possible to implement it or not.

In 1919, the League of Nations discussed and decided to hand over the mandate of Armenia to the United States.

In 1918 after the declaration (in our opinion) Republic of Armenia was looking for the patronage of a powerful state, a mandate. Eventually none of the once-allied big states wanted to take over the patronage of Armenia.

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

Լարիսա Մանուկյան

ՀՊՏՀ Հասարակագիտության ամբիոն, հայոց պատմության դասախոս

Հիմնաբառեր: Աշխարհամարտ, Ազգերի լիգա, Փարիզի կոնֆերանս, Ավետիս Ահարոնյան, Պողոս Նուբար փաշա, հովանավորություն (մանդատ), Վուդրո Վիլսոն, Սան Ռեմո, հայկական պատվիրակություններ, Իրավարար վճիռ

«Ժամանակները կողոպտիչները եղան իմ ցեղի»:
Ավետիս Ահարոնյան

1918 թ. նոյեմբերի 11-ին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, աշխարհը շարունակեց մնալ բարդ, բազմաթիվ հակասություններով և չլուծված խնդիրներով լի: Աշխարհամարտում դաշնակից Անտանտի պետությունների տարած հաղթանակը իրավունք տվեց պարտվող կողմի հետ կնքելու հաշտության պայմանագրեր և լուծելու պատերազմի ավարտից հետո առկա քաղաքական բոլոր հարցերը: Այդ նպատակով մեծ պետությունները 1919 թ. հունվարի 18-ին Փարիզում (Վերսալ) հրավիրեցին հատուկ կոնֆերանս, որը ընդհատումներով շարունակվեց մինչև 1920 թ. հունվարի 21-ը:

1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշմամբ միջազգային խաղաղությունը պահպանելու և ժողովուրդների միջև համագործակցությունը զարգացնելու նպատակով ստեղծվեց հատուկ կազմակերպություն՝ Ազգերի լիգան (դաշնակցությունը): Այն հարմարեցվեց մեծ պետությունների քաղաքական ձգտումներին՝ «հենց սկզբից ներառործեց անարդարությունն ու անհավասարությունը» (Վեմ, 1934, 17): Կազմակերպությունը սահմանեց վարչական կառավարման (հովանավորության) համակարգ, որը պետք է տարածվեր նաև Հայաստանի վրա: Օսմանյան Թուրքիայի մասնատման հետևանքով ձևավորված հայկական պետությունը պետք է օգտվեր հովանավորությունը (մանդատը) վերցրած պետության պաշտպանությունից՝ Ազգերի լիգայի հսկողության ներքո:

Փարիզի հաշտության վեհաժողովին Հայաստանը պաշտոնապես հրավիրված չէր, որովհետև պատերազմող կողմ չէր ճանաչվել: Բայց Թուրքիայի հետ մեծ պետությունների կողմից հաշտության պայմանագրի նախապատրաստման ընթացքում Հայկական հարցի քննարկման և լուծման հետ կապված, Փարիզում էին հայկական երկու պատվիրակություններ՝ Հայաստանի

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

Հանրապետության՝ Ավետիս Ահարոնյանի և Ազգային Պողոս Նուբար փառալուծի գլխավորությամբ: Պատվիրակությունները ակտիվ գործունեություն ծավալեցին Հայկական հարցի հետ կապված բազմաթիվ խնդիրների այդ թվում հովանավորության առնչությամբ: Հարցն այն էր, թե որ պետությունն էր շահագրգռված վերցնելու Հայաստանի հովանավորությունը պատմական այդ ծանր ժամանակաշրջանում: Մյուս կողմից՝ անչափ կարևոր էր, թե մեր պատվիրակությունների ներկայացուցիչները, ՀՀ կառավարությունը, արևմտահայությունը, հասարակական, քաղաքական, ազգային գործիչները որ մեծ պետության հովանավորությունը կնախընտրեին, և արդյոք հնարավոր էր դա իրագործել, թե ոչ:

1919 թվականին Ազգերի լիգան քննարկել էր և որոշել Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին:

1918 թ. մայիսի 28-ին պետության հռչակումից հետո (մեր կարծիքով) Հայաստանի Հանրապետությունը փնտրում էր հզոր պետության հովանավորություն (մանդատ): Որևէ երբեմնի դաշնակից մեծ պետություն այդպես էլ չցանկացավ ստանձնել Հայաստանի հովանավորությունը:

Армянские делегации и проблема покровительства Армении

Лариса Манукян

АГЭУ кафедра общественных наук, преподаватель истории Армении

Ключевые слова: Мировая война, Лига Наций, Парижская конференция, Аветис Агаронян, Погос Нубар-паша, покровительство (мандат), Вудро Вильсон, Сан-Ремо, армянские делегации, Арбитражное решение

«Времена стали грабителями моего народа».

Аветис Агаронян

11 ноября 1918 года после окончания Первой мировой войны мир продолжал оставаться сложным, полным множества противоречий и нерешенных проблем. Победа государств-союзников Антанты в мировой войне давала право заключать мирные договоры с проигравшей стороной и решать все политические вопросы после окончания войны. С этой целью крупные государства 18 января 1919 года в Париже (Версаль) созвали специальную конференцию, которая с перерывами продолжалась до 21 января 1920 года.

В 1919 году по решению Парижской мирной конференции в целях поддержания международного мира и развития сотрудничества между народами была создана специальная организация — Лига Наций. Она была адаптирована к политическим устремлениям больших государств, «с самого начала создала несправедливость и неравенство». Организация создала систему административного управления (покровительства), которая должна была распространяться и на Армению. Армянское государство, образовавшееся в результате раздела Османской Турции, должно было пользоваться защитой государства, взявшего на себя покровительство (мандат) под надзором Лиги Наций.

Армения не была официально приглашена на Парижскую мирную конференцию, поскольку не была признана воюющей стороной. Но во время подготовки великими державами мирного договора с Турцией, в связи с обсуждением и решением армянского вопроса, в Париже находились две армянские делегации: из Республики Армения во главе с Аветисом Агароняном и Национальная делегация во главе с Погосом Нубар-пашой. Делегации провели активную деятельность по многим вопросам, связанным с армянским вопросом. Вопрос заключался в том, какое государство было заинтересовано в том, чтобы взять на себя покровительство над Арменией в тот трудный исторический период. С другой стороны, было крайне важно покровительство какого великого государства предпочтут представители наших делегаций, правительства РА, западных армян, общественных, политических и национальных деятелей, и можно ли было это осуществить или нет.

В 1919 году Лига Наций обсудила и решила передать мандат Армении Соединенным Штатам.

В 1918 году (на наш взгляд) после декларации Республика Армении искала покровительство мандат мощного государства. Ни одно из некогда союзнических крупных государств так и не захотело взять покровительство Армении.

* * *

Ներածություն: Հողվածի նպատակն է պատմական փաստերի, բանակցությունների վերլուծությամբ ներկայացնել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հայ ժողովրդի համար ստեղծված «նպաստավոր» իրավիճակում, ինչու Հայաստանի հովանավորության խնդիրը այդպես էլ չլուծվեց: Փաստորեն բանակցությունների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի հովանավորության հարցը իրականություն չդարձավ պատերազմում հաղթած մեծ պետությունների քաղաքական խաղերի, ինչպես նաև ԱՄՆ-ում օրեցօր ուժեղացող եվրոպական գործերին չխառնվելու քաղաքականության պատճառով: Այդ խնդիրն այսօր էլ արդիական է, երբ մեկ դար հետո պատմական նոր, միջազգային ավելի բարդ պայմաններում (երբ Արցախի Հանրապետությունը զիջվել է Ադրբեջանին, աստիճանաբար վերաձևում են Հայաստանի սահմանները) ԱՄՆ-ի, ԵՄ-ն խոստումներին, աջակցությանը, հովանավորությանը հավատալը, նրանց վրա հույս դնելը անիմաստ է, միթե՞ պատմական փորձը բավարար չէ:

1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունները համատեղ Փարիզի Խաղաղության կոնֆերանսին ներկայացրին «Հայկական հարցը հաշտության վեհաժողովի առջև» վերնագրով համատեղ «Հուշագիր», որը հիմնավորում էր հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը և ճշտում նրա տարածքը: Փետրվարի 26-ին միացյալ պատվիրակությունը կոնֆերանսի Տասի խորհրդի նիստին ներկայացրեց հուշագրի պահանջները:

Ներկայանալով կոնֆերանսին՝ հայկական պատվիրակությունները բազմաթիվ հարցերի առնչությամբ ունեին խոր տարածայնություններ, մինչդեռ անհրաժեշտ էր հարթել դրանք, բոլոր հարցերի շուրջ հանդես բերել գաղափարական ներդաշնակություն և մեկ ճակատով հանդես գալ արևմտյան իրավարար պետությունների առջև:

ՀՀ պատվիրակությունը անհանգստության լուրջ հիմքեր չէր նկատում, քանի որ պատմական պահը բացառիկ նպաստավոր էր: Բանակցությունների սեղանի շուրջ պետք է նստեին պատերազմում հաղթած Անտանտի երկրները, նրանց «փոքր դաշնակից» Հայաստանը և հաղթողների ողորմածությանը հանձնված Թուրքիան: Հետևաբար՝ Հայաստանի համար կարող էին ծագել միայն տարածքային-սահմանային որոշ դժվարություններ, որոնք, իհարկե, հեշտ էր

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

հաղթահարել պատմաթեթևակյան, մշակութային և այլ բնույթի քաղաքացիական փաստեր ներկայացնելով:

Ահա թե ինչ էր գրում Ավետիս Ահարոնյանը այդ առնչությամբ. «Մենք հավատացած ենք, որ մեր դաշնակիցները մեզ կը տան մեր քանդած ու ավեր հայրենիքը: Եւ այդ իրաւունքը ազատութեան, հայ ազգը ձեռք է բերել հինգ դարերի տառապանքի, երեսուն տարուայ պայքարի եւ վեց տարուայ պատերազմի գնով» [Ահարոնյան Ա., 1943, 111]:

«Այսպէս, մինչ խորհրդարաններում աղմկայոյց ճառեր էին արտասանուում պատերազմի բարձր նպատակների եւ ճշմարիտ ժողովուրդների ինքնորոշման մասին, աշխարհի աչքից հեռու կատարուում էին բանակցութիւններ եւ կնքուում էին գաղտնի դաշնագրեր որոշելու համար պատերազմից յետոյ հաստատուելիք միջազգային յարաբերութիւնները» [Վեմ, 1934,9-10]:

Հայ պատմագրոյթան մեջ քննարկվող հարցերին, մեծ պետութիւնների դիվանագիտական քաղաքականութեանն են անդրադարձել բազմաթիւ անվանի պատմաբաններ ինչպէս Խորհրդային Հայաստանում, այնպէս էլ Սփյուռքում: Ինչպէս օրինակ Ն. Ադոնցը, Լեոն, Բ. Բորյանը, Հ. Տեր-Հակոբյանը, Ա. Թերզիբաշյանը, Ս. Պողոսեանը, Ա. Եսայանը, Գ. Գալոյանը, Ջ. Կիրակոսյանը, Լ. Խուրշուդյանը, Ռ. Հովհաննիսյանը, Ստ. և Կ. Պողոսյանները, Հր. Միմոնյանը և ուրիշներ:

Դեռևս 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբերին՝ Աշխարհամարտի ավարտից հետո, Անգլիայի կառավարութիւնը քննարկեց Արևմտյան Հայաստանի ճակատագրի հետ կապված խնդիրները: Ներկայացուցիչների մի մասը եկավ այն եզրակացութեան, որ Հայաստանի և Անդրկովկասի մյուս երկրների հովանավորութիւնը պետք է հանձնել Ֆրանսիային, մյուս մասը՝ ԱՄՆ-ին: Անդրկովկասի հանրապետութիւններից Հայաստանը ամենաչնչին հետաքրքրութիւնն էր ներկայացնում հատկապէս Անգլիայի համար: «Անգլիական քաղաքական շրջանակներում այն կարծիքն էր տիրապետուում, որ Հայաստանի մանդատի խնդիրը կլուծվի Հայաստանի սահմանները որոշելուց և թիրաքների կողմից հաշտութիւն ստորագրելուց յետոյ. երբ հեշտ կլինի որոշել այն» [Ժողովուրդ,6 հուլիսի 1920, 106]:

1919 թվականի վերջին և 1920 թվականի սկզբին անգլիական պառլամենտը նորից անդրադարձավ Հայաստանի հովանավորութեան հարցին: Անգլիան Հայկական հարցի իրական և միակ լուծուումը տեսնուում էր այդ հովանավորութիւնը ԱՄՆ-ին կամ Ազգերի լիգային հանձնելու մեջ: Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը այդ տեսակետը պաշտպանեց նաև 1920 թվականի Սան Ռեմոյի կոնֆերանսում:

Անգլիայի կողմից Հայաստանի հովանավորութեանն է անդրադարձել ժամանակի հասարակական-քաղաքական գործիչ Ավետիս Թերզիբաշյանը: Նա Անգլիան համարուում էր բնական դաշնակից Հայաստանի համար:

«Երկու վտանգներու դէմ կարևոր պատուար մը» հողվածուում, անդրադառնալով «Թայմսի» հողվածիին՝ ստեղծելու Հայաստան, որ տարածվի Միջերկրականից մինչև Սև ծով, Թերզիբաշյանը գրուում է. «Այդպիսի Հայաստանն պատուար մը կըլլայ ոչ միայն համախալամական, այլ նաև պոլշեվիկեան վտանգի դէմ, երկու վտանգներ, որոնք կը սպառնան այսօր Անգլիոյ համաշխարհային տիրապետութեան: Ճիշդ է, որ Անգլիոյ այս քաղաքականութիւնը կը գուգաղիպի Հայերու ձգտումներուն, այն է ունենալ միացեալ անկախ Հայաստան: Անկախ Հայաստանը Միջերկրականից կսկսի մինչև Պարսկաստանի սահմանը, մինչև Սև ծով, երկու դեպքերում էլ

թուրքերին կկտրի թաթարներից և պատուար կդառնա երկուսի միջև: Այդ ձեռնտու է և՛ Հայաստանին, և՛ Անգլիային» [Ժողովուրդի ձայնը, փետրվար-մարտ 1920]:

Ըստ նրա. «Հայաստանը կարիք ունի արտաքին ապահովության որպեսզի կարողանա զբաղվել քայքայված տնտեսությամբ, ստեղծել ֆինանսներ նորաստեղծ պետության համար, մանավանդ ցուցադրել այնպիսի պայմաններ, որոնք կարողանային հրապուրել և դեպի Հայաստան քաշել ամբողջ աշխարհում փոված հայությանը, առանց որի Հայաստան բառը կմնա աշխարհագրական բացատրություն միայն: Ահա թե ինչու է անհրաժեշտ Անգլիայի երաշխավորությունը» (նույն տեղում):

Ապա անդրադառնալով Ամերիկայի հովանավորությանը՝ գրում է. «Մենք գիտենք, որ Ամերիկան չունի այն հատուկ շահագրգռվածությունը, որ ունի Անգլիան, այլ միայն մարդասիրական զգացումներով, կուզի վերցնել Հայաստանի հոգատարությունը»: Հեղինակը կարծիք է հայտնում. «Անգլիան այնքան ջենտլմեն կլինի ինչպես ամերիկացին և ելնելով այդ երկու դրդապատճառներից կստանան Հայաստանի հոգատարությունը» [նույն տեղում]:

Բայց, մեր կարծիքով, միգուցե և նա ճիշտ էր, սակայն իզուր էր Թերզիբաշյանի լավատեսությունը, քանի որ Անդրկովկասի երեք հանրապետություններից Հայաստանը ամենաչնչին հետաքրքրությունն էր ներկայացնում Անգլիայի համար: Հասարակական գործիչ, հրապարակախոս Գերսամ Ահարոնյանի կարծիքով. «Այո, տրամաբանական էր ակնկալել, որ Անգլիա մեր տեսակետը պաշտպաներ, մանաւանդ որ արդար էր մեր դատը, սակայն այդպես չէր, Անգլիա նախապատվութիւն տուաւ Վրաստանին» [Ահարոնյան Գ., 1986, 117]:

Աշխարհամարտից հետո Անդրկովկասի հանրապետություններին վերաբերվող հարցերի առնչությամբ 1919 թ. աշնանը դաշնակից պետությունները լուրջ քննարկման խնդիր դարձրին այդ հանրապետությունների դե ֆակտո ճանաչումը, սակայն նրանց մոտեցումը միանշանակ չէր: Օրինակ, Անդրկովկասում անգլիական կոմիսար Ուորթոնը և ուրիշներ կարծում էին, որ առաջնակարգ անհրաժեշտություն է այդ ճանաչումը, իսկ մյուսները, ինչպես գեներալ Հարբորդը մտածում էին, որ այդ առումով դեռ վաղ է:

1920 թ. հունվարի 10-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պրեմիեր մինիստրներն ու արտաքին գործերի նախարարները, ԱՄՆ-ի և Ճապոնիայի դեսպանների ներկայությամբ քննարկելով Անդրկովկասում վարվելիք քաղաքականության հարցը իրենց կառավարությունների անունից հայտարարեցին Ադրբեյջանի և Վրաստանի Հանրապետությունների դե ֆակտո ճանաչման մասին: ՀՀ ճանաչումը կախման մեջ էր թողնվում Թուրքիայի հետ կնքվելիք խաղաղության պայմանագրից: Իհարկե, խոսքը Սևրի պայմանագրի մասին էր:

1920 թ. հունվարի 19-ին Փարիզի կոնֆերանսի Գերագույն խորհուրդը դե ֆակտո ճանաչեց ՀՀ-ը: Քանի որ առանց այդ ճանաչման՝ ԱՄՆ-ի կառավարությունը իրավական հիմք չէր ունենա այն բանակցությունների համար, որը վարում էր Հայաստանի հետ հովանավորության հարցի շուրջ: Ուստի 1920 թ. հունվարի 26-ին ԱՄՆ-ի դեսպանը Փարիզում հաշտության կոնֆերանսի գլխավոր քարտուղարին տեղեկացրեց, որ ամերիկյան կառավարությունը միանում է Գերագույն խորհրդի 1920 թ. հունվարի 19-ի Հայաստանի դե ֆակտո ճանաչելու որոշմանը:

1920 թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ն ճանաչեց նաև Հայաստանի Անկախ Հանրապետությունը:

Նման պայմաններում դեռևս 1919 թ. Ազգերի լիգան քննարկեց Հայաստանի հովանավորության հարցը՝ որոշելով այն հանձնել ԱՄՆ-ին:

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

Ըստ պատմաբան Ադասի Եսայանի՝ 1920 թ. մարտի 12-ին Անգլիան Գերագույն խորհրդի անունից Ազգերի լիգային առաջարկեց Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին՝ նպատակ ունենալով վերջինիս ներգրավելու մերձավորարևելյան խնդիրներում, ավելի ճիշտ՝ ապահովելու նրա մասնակցությունը Թուրքիայում քեմալական հեղափոխությունը ճնշելուն և խորհրդային իշխանության համար պայքարող Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ ուղղված արշավանքին [Եսայան Ա., 1965, 194]:

Ի վերջո, ԱՄՆ-ի ղեկավար շրջանների կարծիքը Հայաստանի հովանավորության մասին այն էր, որ իրենց երկիրը պետք է վերցնի այն: Սակայն, մեր կարծիքով, ըստ նրանց, հայկական պետությունը պետք է ընդգրկեր մոտ հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածք և ելք ունենար դեպի Սև, Կասպից և Միջերկրական ծովեր: Այդպիսի սահմանագծմանը համաձայն չէր Անգլիան, որը ձգտում էր ԱՄՆ-ին պարտադրել Հայաստանի հովանավորությունը՝ նրա այդ պահին գոյություն ունեցած սահմաններում: Անգլիան, իհարկե, ինչպես համոզվեցինք, արդեն չէր ցանկանում ստանձնել մեր երկրի հովանավորությունը, քանի որ դա կապված էր մեծ ծախսերի հետ և չէր հրապուրում իրեն:

Նույն ժամանակ Ավ. Ահարոնյանը ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում ընդգծում էր, որ իր կարծիքով. «... Հայաստանի վերջնական կազմակերպումի խնդիրը ուշանում է, նաեվ այն պատճառով, վոր մինչև պայման չի լուծվել մեր յերկրի հովանավորի հարցը»: Ճիշտ է (գրում է նա), մամուլում կիսապաշտոնապես Միացյալ Հայաստանի հովանավոր էր համարվում Ամերիկան, բայց նրա պաշտոնական համաձայնությունը չկար, և նախագահ Վիլսոնը ամերիկյան սենատում ուժեղ դիմադրության էր հանդիպել: Ըստ Ահարոնյանի՝ Վիլսոնը, այնուամենայնիվ, չէր կասկածում իր հաղթանակին (մարտին Վիլսոնը վերադարձել էր Փարիզ և հույս ուներ, որ իր հետ բերել է վերջին խոսքը): Ահարոնյանը նաև հաղորդում էր, որ ֆրանսիացիները կիսապաշտոնապես հասկացրել էին և՛ իրեն, և՛ փաշային, որ Ֆրանսիան շատ է ցանկանում լինել Հայաստանի հովանավորը և դժգոհ էր Ամերիկային տրված նախապատվության համար: Միաժամանակ նա հաղորդում էր, որ իրենց պատասխանները միշտ եղել են խուսափողական [ՀԱԱ, ֆ.200, մ.1, գ.290, թ.4]:

Ինչ վերաբերվում էր ԱՄՆ-ի կողմից հովանավորությանը, Ահարոնյանը գրում էր, որ Վիլսոնը առանձին դիմել էր Սենատին՝ խնդրելով ընդունել Հայաստանի մանդատը:

Այստեղ Ահարոնյանը երկու նպատակ էր տեսնում. նախ՝ Վիլսոնը հոգեբանական պահը պատշաճ էր համարում և վստահ էր, որ կոնգրեսը կընդունի իր դիմումը, և երկրորդ՝ «Վիլսոնը լավ գիտենալով, որ իր առաջարկը անպատճառ պիտի մերժվի, այնուամենայնիվ դիմել է որպեսզի իր վրայի պատասխանատու լինելը վերանայ, քանի որ եւ մենք, եւ Խաղ. Համագումարը եւ գրեթե ողջ քաղաքակիրթ աշխարհը նրանից, Վիլսոնից է սպասում Հայաստանի հուանաւորութիւնը: Որը կարդարանա այս երկու ենթադրութիւններից, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան» [նույն տեղում, 143-144]:

Դաշնակից պետությունների միջև գոյություն ունեցող անհամաձայնությունների պատճառով Հայաստանի հովանավորության խնդիրը ձգձգվեց մոտ մեկ տարի: Այդ խնդրին Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան նորից անդրադարձան 1920 թ. ապրիլի 19-26-ը՝ Իտալիայի Սան Ռեմո քաղաքում հրավիրված կոնֆերանսում: Հայաստանի հովանավորության մասին ընդունվեց

հետևյալ որոշումը. «... դիմել պրեզիդենտ Վիլսոնին, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգները ընդունեն Հայաստանի մանդատը այն սահմաններում, որոնք տրված են Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի առաջին տարբերակում, ք) եթե ԱՄՆ չկամենա ընդունել մանդատը, Միացյալ Նահանգների պրեզիդենտին խնդրվում է հանդես գալ իբրև միջնորդ Հայաստանի սահմանների հարցում ...» [Հայաստանը միջ. Դիվանագիտության..., Երևան, 1972, 669]:

Իհարկե, այդ առաջարկությունը ԱՄՆ-ում չէր կարող բացասական արձագանք չգտնել: Ահա այդ մասին Վաշինգտոնում Անգլիայի դեսպանը 1920 թ. ապրիլի 20-ին գրում էր արտաքին գործերի նախարար Քերզոնին. «Միացյալ Նահանգներին Հայաստանի մանդատի առաջարկը ...այստեղ կոնգրեսը և մամուլը խիստ անբարեհաճ են ընդունել...»:

Ընդհանրապես արտահայտված կարծիքն այն է, որ այս մանդատը քաղաքական մեծ դժվարություններ և տնտեսական պակաս առավելություններ է բերում, քան այն, ինչ վերցրել է Մեծ Բրիտանիան, և որ այդ առաջարկը նույնիսկ չպետք է քննարկվի, քանի դեռ չի զուգակցված Կ.Պոլսի և նեղուցների հսկողության հետ...» [նույն տեղում, 672]:

Հայ քաղաքական, հասարակական, ազգային գործիչները խնդրի լուծման գործում մեծ հույսեր էին կապում ԱՄՆ-ի հետ: Հայկական պատվիրակությունները նախընտրում էին ԱՄՆ-ի հովանավորությունը, քանի որ ըստ նրանց այդ երկիրը հայտնի էր իր կայուն ժողովրդավարական սկզբունքներով, մինչ այդ շատ չէր միջամտել Ասիայի և Եվրոպայի երկրների ներքին գործերին, ինչպես նաև Հայաստանից հեռու էր, և փոքր էր վերջինիս գաղութացնելու գայթակղությունը: Դրա վկայությունն էր այն, որ 1919 թ. փետրվարի 12-ին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնն ընդունել էր արքեպիսկոպոս Դուրյանին և պրոֆ. Տեր-Հակոբյանին: 1919 թ. ապրիլի 17-ին էլ Պոդոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանն էին հանդիպել ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հետ: Նախագահը հայ պատվիրակներին հավաստիացրել էր. «...եթե Ամերիկան երբևիցե որևէ մանդատ հանձն առնի այդ կլիմի Հայաստանին: Ես իմ գործընկերներին հաճախ եմ ասել, որ Ամերիկային որևէ մանդատ տալու դեպքում լավագույնը Հայաստանի մանդատն է, որովհետև դա ավելի հեշտ կընդունվի շնորհիվ այն խորը համակրանքի, որ Ամերիկան տաժում է դեպի հայ ժողովուրդը: ԱՄՆ-ի նախագահը խոստացավ նաև, որ ապագա Հայաստանի սահմանները կլինեն հայկական կողմի պահանջներին մոտավորապես համապատասխան» [Ուիլսոն Արարատի, թ.1, մայիս-հունիս 2011]:

Ավ. Ահարոնյանը 1919 թ. մարտի 26-ին Փարիզում ամերիկյան գործիչ Բաումանի հետ զրույցում մտահոգությունն էր արտահայտել. «Եթե Ամերիկան մեզ չօգնի կորած ենք: Կրկնում եմ. Հայաստանն իբրև պետություն կամ այսօր իսկ պիտի կազմվի ձեր օգնությամբ կամ կորած է հավետ: Քանի որ mandat-ի գործը ձգձգվում է, մնում է, որ Ամերիկան անմիջապես ուղարկի Կովկասյան Հայաստան պետք եղած թվով սպաներ, դրամ և ռազմամթերք մեր բանակը կազմակերպելու համար, որ մի ուժեղ կորիզ լինի բոլոր տեսակի վտանգներից առաջ» [Յուշամատեն, էջ 1017]:

Պոդոս Նուբարը նույն միտքն արտահայտել էր պատրիարքին հղած նամակում. «Մենք միաձայնությամբ կրփափագինք, որ Հայաստանի հոգատարությունը ստանձնեն Միացյալ Նահանգները ... Կթվի, թե խաղաղութեան վեհաժողովին որոշումը համապատասխան պիտի ըլլայ մեր նախասիրութեան ...» [Ժողովուրդի ձայնը, 10-23 ապրիլի 1919]:

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

Աշխարհամարտի ավարտից հետո ևս նախագահ Վ. Վիլսոնը այն կարծիքին էր, որ. «Հայերը պիտի ստանան այն, ինչ նրանց պարտական է տալ պատմությունը: Նրանք ասելի լավ տաղանդով գիտեն իրենք իրենց կառավարել» [Ժողովուրդ, 1 դեկտեմբերի 1918]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ավ. Ահարոնյանը և Պ. Նուբար փաշան «վճռեցին էլի մի նոր անգամ դիմել նախագահ՝ Վիլսոնին, առաջարկելով թե հնար է ընդունել Հայաստանի մանդատը և այսպիսով վերջ դնել հայկական սահմանների առթիվ ծագող դժվարություններին, և եթե Ամերիկյան անկարող պիտի լինի այս առաջարկն ընդունել, ապա դաշնակիցները խնդրում են Վիլսոնին իրավարար հանդիսանալ ու վճռել մեր սահմանների կնճիռը: Գերագույն խորհուրդը միաժամանակ խնդրում է Վիլսոնին իր պատասխանը հասցնել մինչև մայիսի 10-ը, երբ թուրքերը Փարիզում պիտի ընդունին իրենց ստորագրելիք դաշնագիրը» [ՀԱԱ, ֆ. 200, մաս 1, գ. 290, թ. 125]:

Այդ է պատճառը, որ Նուբար փաշան Մարսելի «Արմենիա» թերթի հունիսի 11-ի համարում հրապարակած իր հեռագրում՝ ուղղված Նյու Յորքի մամուլի հայկական բյուրոյին, հորդորում էր, որ վերջինս ջանք ու եռանդ չխնայի, որ ԱՄՆ-ը համաձայնի ստանձնել Հայաստանի հովանավորությունը:

Մրան հետևեց այն, որ 1919 թ. փետրվարին Սպիտակ տանը տեղի ունեցավ Հայաստանի հովանավորությանը նվիրված խորհրդակցություն: Այնտեղ ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ եթե ԱՄՆ-ը որևէ երկրի հովանավորությունն ընդունի Ազգերի լիգայից, ապա, առաջին հերթին, դա պետք է լինի Հայաստանին:

Մեր կարծիքով, ԱՄՆ-ի կոնգրեսը, իհարկե, կարող էր թույլատրել հովանավորության ընդունումը Առաջին աշխարհամարտի վերջում՝ երկրում ուժեղ հայամետ տրամադրությունների ազդեցությամբ, բայց նախագահ Վ. Վիլսոնը փոքր-ինչ հետաձգեց որոշումը՝ մինչև հովանավորության վարչության մանրամասների համաձայնեցումը և Ազգերի լիգայի մասին պայմանագրի մեջ մտնելը:

Նախագահ Վիլսոնի անվճռականության վրա ազդեց նաև Մենատի հանրապետական մեծամասնության բացասական վերաբերմունքը Հայաստանի հովանավորության նկատմամբ:

Այսպես. Իրավագիտության դոկտոր Վ. Վիլսոնի համար պարզ էր, որ միայն այն երկրները կարող էին ստանձնել որևէ հովանավորություն, ովքեր մինչ այդ արդեն ընդունել էին Ազգերի լիգայի կանոնադրությունը, քանի որ հովանավորության համակարգը հիմնված էր այդ կանոնադրության 22-րդ հոդվածի վրա: Հետևաբար ԱՄՆ-ի նախագահը քաջ գիտակցում էր, որ իրավական հիմքի բացակայության պատճառով իր երկիրը չէր կարող վերցնել Հայաստանի հովանավորությունը:

ԱՄՆ-ի նախագահի նախաձեռնությամբ դեռ 1919 թ. հունվարի 30-ին Փարիզի վեհաժողովը վճռեց ազատագրել Հայաստանը և նշանակել հովանավոր (մանդատատեր): Մարտի 20-ին Վիլսոնի առաջարկությամբ վեհաժողովը որոշեց Մերձավոր Արևելք ուղարկել Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնախումբ՝ քննելու Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները: Սակայն, Մերձավոր Արևելք մեկնեցին միայն ԱՄՆ-ի ներկայացուցիչները՝ Քինգն ու Քրեյնը, մյուս պետությունները չնշանակեցին ներկայացուցիչներ: 1919 թ. հունիսի 10-ից մինչև հուլիսի 21-ը Պոլսում Քինգն ու Քրեյնը ուսումնասիրություններ կատարեցին և հանգեցին այն եզրակացության,

որ նախկին Օսմանյան կայսրությունից պետք է կազմել երեք պետություն՝ Հայաստան, Թուրքիա և Պոլիս, որոնցից յուրաքանչյուրը առանձին-առանձին և բոլորը միասին պետք է հանձնվեն մեկ պետության հովանավորությանը: Իրենց տեղեկագրում Քինգն ու Քրեյնը առաջարկում էին, որ Հայաստանի, Թուրքիայի և Պոլսի մանդատը տրվի Ամերիկային [Վրացյան Ս., ՀՀ, 1993, 364]:

Այսպիսով՝ 1919 թ. մայիսի 14-ին Փարիզի հաշտության կոնֆերանսը որոշում ընդունեց Հայաստանի հովանավորությունը ԱՄՆ-ին հանձնելու մասին: Ըստ Ազգերի լիգայի կանոնադրության՝ մանդատային համակարգը կառավարման ձև էր: 22-րդ հոդվածով սահմանվում էր, որ մանդատային կառավարում իրականացվում է այն գաղութների և տարածքների նկատմամբ, որոնք պատերազմի հետևանքով դադարել են լինել մինչ այդ իրենց կառավարող պետությունների տիրապետության տակ և որոնք բնակեցված են իրենց ինքնուրույն ղեկավարելու դեռևս անընդունակ ժողովրդով [Меж.право..., т.2, М, 1957, с.82-83]:

Վիլսոնին առաջարկվում էր նաև գծել ՀՀ սահմանները. «Երկու օր առաջ պաշտօնապես յայտնի եղաւ, որ Վիլսոնը համաձայն է դառնալ մեր սահմանների խնդրում իրավարար: Ենթադրութիւն կա, որ Վիլսոն մեզ կտայ ոչ միայն Էրզրում, այլ հաւանաբար Երզնկան ու Տրապիզոնը: Այդ կը տեսնենք: Հաստատն այն է այսօր, որ Վիլսոնի արբիտրաժը ի վնաս մեզ լինելու չէ» [ՀԱԱ, ֆ. 200, մաս 1, գ. 290, թ. 143]:

1920 թ. մայիսի 17-ին նախագահ Վիլսոնը տվեց իր համաձայնությունը ապագա Հայաստանի սահմանների որոշման իրավարար լինելու մասին: Նույն թվականի մայիսի 24-ին նա դիմեց ԱՄՆ-ի Կոնգրեսին Հայաստանի մանդատն ընդունելու առաջարկով:

Ըստ էության, ԱՄՆ-ը միակ պետությունն էր տվյալ ժամանակաշրջանում, որ ուներ անհրաժեշտ նյութական ու բարոյական հնարավորություն և ի վիճակի էր վերցնելու այդ պարտավորությունը: Ֆրանսիացիները և անգլիացիները շարունակում էին հույս ունենալ, որ Վիլսոնը և ԱՄՆ-ը այնուամենայնիվ կցանկանան պատասխանատվություն ստանձնել փոքր տարածք ունեցող Հայաստանի հանդեպ: Նրանք խնդրեցին Վ. Վիլսոնին գծել Հայաստանի վերջնական սահմանները Սան Ռեմոյում որոշված տարածքների շրջանակներում: ԱՄՆ-ի նախագահը մինչև նոյեմբեր չներկայացրեց Հայաստանի վերջնական սահմանները, չնայած Սան Ռեմոյում դեռևս հաղթանակած պետությունները հայտարարել էին, որ վերջապես եկել են համաձայնության:

Հաշտության կոնֆերանսի ընդունած որոշման հիման վրա դեռևս 1919 թ. ամռանը ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը Արևելյան Անատոլիա և Հայաստան էր ուղարկել ամերիկյան նոր պատվիրակություն՝ գեներալ Հարբորդի գլխավորությամբ. «Մենք ցանկանում ենք, որպեսզի Դուք տեղում հետազոտեք քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանները, որոնք կարող էին ներկայացնել իսկական հետաքրքրություն Ամերիկայի համար» [Борьян Б., Армения, ме. дип.иСССР, 1929, с.66]:

Հարբորդի պարտականությունն էր նշումներ անել հայկական պետության սահմանների առնչությամբ և ուսումնասիրել հովանավորության պայմանները: Նրա առաքելությունը Կարս-Կադզվան-Կողբ-Սուրմալու ճանապարհով հասնելով Երևան՝ ջերմ ընդունելության արժանացավ կառավարության և ժողովրդի կողմից [Վրացյան Ս., ՀՀ, 1993, էջ 364]:

Հարբորդը այցելեց Մերձավոր Արևելք, ապա վերադառնալով՝ ներկայացրեց իր մանրամասն տեղեկագիրը: Չօգուտ հովանավորությունն ընդունելուն՝ Հարբորդը բերում էր 14 հիմք՝ ընդդեմ 13-ի: Սա մի եզրակացություն էր, որ, իհարկե, ոչնչով չէր կարող ուժեղացնել Վիլսոնի դիրքը, և

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

ինչպես գրում էր Միմոն Վրացյանը, ընդհակառակը, ջուր էր լցնում վիլսոնյան քաղաքականության թշնամիների ջրաղացին [նույն տեղում , 365]:

Ըստ էության, գեներալ Հարբորդի տեղեկագիրը աննպաստ էր Հայաստանի համար: 1920 թ. ապրիլին նախագահ Վիլսոնը ամերիկյան ծերակույտին է հանձնում Հարբորդի տեղեկագիրը: Նախագահի հակառակորդները Հենրի Լաճի գլխավորությամբ ամեն մի հնարավորություն գործադրում են ձախողելու նախագահի ծրագրերը կապված Հայաստանի հետ: Միաժամանակ, ԱՄՆ-ի նախագահին են դիմում բազմաթիվ ամերիկացիներ՝ հասարակական, քաղաքական, կյանքի տարբեր բնագավառներից, հոգևորականներ, հասարակ քաղաքացիներ և խնդրում գորավիզ կանգնել հայկական դատին: Հայ ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ նախագահ Վիլսոնից: Կանխագալով դաշնակիցներից և հաշտության վեհաժողովից սպասվող հուսախաբությունը՝ 1919 թ. դեկտեմբերի 26-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդը խնդրագիր նամակով դիմում է նախագահ Վիլսոնին՝ նշելով, որ «Ինք եւ իւրաքանչիւր ամերիկացի օգնութեան հասնին հայոց եւ Հայաստանին» [Հայկազեան հայագիտական հանդես, հ.Ձ, 1977, 75]: Արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանը այդ նամակը անձամբ է հանձնում նախագահ Վիլսոնին:

ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը ծերակույտից պահանջում է, որ ԱՄՆ-ն ընդունի Հայաստանի հովանավորությունը այնպես, ինչպես առաջարկվում էր Սան Ռեմոյի խորհրդաժողովում:

Այդ առիթով «Ժողովուրդ» թերթը, անդրադառնալով հարցին, գրում էր, որ ֆրանսիական և իտալական հաղորդագրությունների համաձայն Վիլսոնը առաջարկել էր ամերիկյան սենատին դրական կերպով լուծել Հայաստանի հովանավորության հարցը:

1920 թ. մայիսի 22-ին ԱՄՆ-ի ծերակույտը հոգուտ Հայաստանի մանդատի բանաձև է ընդունում: Սակայն, սենատորները միակարծիք չէին, և Հենրի Լաճի ղեկավարած պայքարը հովանավորության ընդունման դեմ հաջողություն է ունենում ու ձախողում նախագահի առաջարկը: Երկար վիճաբանություններից հետո ԱՄՆ-ի Սենատը 1920 թ. հունիսի 1-ին 23 կողմ և 52 դեմ ձայնով մերժում է ընդունել Հայաստանի հովանավորությունը [Եսայան Ա, 1965, 194]: Այն հրաժարվում են ընդունել նաև մյուս երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան:

Հայաստանի հովանավորության հարցի քննարկումը ԱՄՆ-ի Սենատում, մեր կարծիքով, անկախ քվեարկության ելքից, հաստատում էր այն իրավական փաստը, որ հայկական տարածքները արդեն չէին գտնվում թուրքական գերիշխանության տակ:

Այնուամենայնիվ, չենք կարող չասել, որ ԱՄՆ-ի նախագահը հայկական դիրքորոշում է ունեցել, և 1920 թ. ամռանը Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած համագումարում ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցությունը նախագահի խնդրանքով իր նախագիծ-ծրագրի մեջ Հայաստանի մասին բանաձև է ընդգրկել: Իհարկե, ընդդիմության պատճառով բանաձևը ձևափոխվել է, և համագումարը խուսափողական պարտավորություններ է ընդունել Հայկական հարցի նկատմամբ: Բանաձևում ասվում էր. «Մեր խոր եւ իրաւ համակրանքը կը յայտնենք Հայաստանի դժբախտ ժողովուրդին, եւ կը հաւատանք թէ մեր կառավարութիւնը իր սահմանադրութեան եւ սկզբունքներուն հաւատարիմ, ամեն կարելի ու յարմար օժանդակութիւն պիտի ընծայէ իրենց (հայերուն) հիմնելու ու պահելու համար իրենց հատուկ կառավարութիւնը» [Միմոնյան Հր., 1968, 580]:

Մինևույն ժամանակ 1920 թ. աշնանը ԱՄՆ-ում նախագահական ընտրություններ էին, ուստի հենց այդ ժամանակ էլ կարող էր որոշվեր Ամերիկայի դիրքը համաշխարհային պատերազմի հետևանքով անլուծելի մնացած հարցերի նկատմամբ:

«Ժողովուրդ»-ը այս առումով գրել է. «Հենց աշնանը կորոշվի Ամերիկայի դիրքը դեպի Հայկական հարցը: Օգտվելով իր լայն իրաւունքներից, Վիլսոնը դրել է իր veto-ն Վերսալի դաշնագրի վրայ», ապա շարունակել.

«Այսպիսով, արտաքին քաղաքականութեան հարցի շուրջը, որից կախած է և Հայաստանի մանդատի խնդիրը, Ամերիկայում շարունակում է ուժեղ պայքար երկու խոշոր քաղաքական հոսանքների մէջ: Եւ սպասել, որ այժմ Հայաստանի հոգատարութեան խնդիրը կվճուէր դրականապէս չէր կարելի: Ամերիկան իր վերաբերմունքը ցույց կտայ դեպի եւրոպական պատերազմից բխող քաղաքական հարցերը առաջիկայ աշնանը, նախագահական ընտրութիւնների ժամանակ: Հենց աշնանը կորոշվի Ամերիկայի դիրքը դեպի Հայկական հարցը» [Ժողովուրդ, 21 սեպ. 1920]:

Եվ 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրել է իրավարար վճիռ, որի ամբողջական անվանումն է՝ «ԱՄՆ-ի նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազականացման վերաբերյալ» [ՌԻԽտ Արարատի, 2011, թ. 1]:

Այստեղ կարելի է և տեղին է հիշել Ազգային պատվիրակության անդամ՝ պրոֆ. Տեր-Հակոբյանի կարծիքը Ամերիկայի և ամերիկացիների մասին: Վերադառնալով ԱՄՆ-ից՝ նա հայտարարել է. «Ամերիկան ամեն տեսակ անակնկալների երկիր է: Ամերիկյան ժողովուրդը պատրաստ է մեզ օգնելու նյութապէս, բարոյապէս, բայց մեծամասնությունը մանդատ չի ուզում: Ապա եզրակացնում է, որ այս տրամադրությունը կարող է փոխվել: Ուրիշ, մանավանդ փոքր պետության մանդատ առանց Ամերիկայի օգնության չի կարող լինել: Իսկ առանց դրան անկարելի է վերաշինել Հայաստանը: Դաշնակցականներից շատերը այնքան թեթևամիտ են, որ կարծում են, թէ Ամերիկան փող կը տայ առանց մանդատի» [Ժողովուրդ, 6 հուլիսի 1920, 106]:

Դեռևս 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում դաշնակիցների Գերագույն խորհուրդը հաշվի առնելով ԱՄՆ-ի տրամադրությունները՝ հրաժարվելու Հայաստանի հովանավորությունից, որոշում է ընդունել նաև այն Ազգերի լիգային հանձնելու մասին:

Ավ. Ահարոնյանը 1921 թվականի Լոնդոնի համագումարից հայտնում էր, որ վերջինս Հայաստանի հովանավորությունը առաջարկել էր Ազգերի լիգային, որը, նախքան պատասխանելը, տեղեկություններ էր պահանջել ֆինանսական, զինվորական, վարչական հարցերի վերաբերյալ:

Քանի որ չէր երաշխավորվել այդ նպատակով նրան վարկեր դրամադրելը, ի վերջո, Ազգերի լիգան ևս մերժել է առաջարկը:

Այս բոլոր քննարկումներից հետո գալիս ենք այն եզրակացության, որ ԱՄՆ-ին ևս տվյալ պահին նպատակահարմար չէր վերցնել ոչ միայն Հայաստանի, այլև այդ տարածաշրջանի հովանավորությունը, քանի որ միան գենքի օգնությամբ կարող էր հաստատվել Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում: Պետք է հաշվի առնել, որ նույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանը, հաղթելով քաղաքացիական պատերազմում, պայքար էր սկսել Անդրկովկասի հանրապետություններում խորհրդային իշխանություն հաստատելու համար: Միաժամանակ,

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

արդեն ձևավորվել էր խորհրդա-քեմալական համագործակցություն՝ ընդդեմ Անտանտի պետությունների:

Ահա թե ինչու, մեր կարծիքով, Լլ. Ջորջը դեռևս Սան Ռեմոյի կոնֆերանսում իրատեսորեն այն կարծիքն էր հայտնել, որ. «... հայերը պետք է զինվեն և հնարավորություն ստանան անձամբ գործելու... դաշնակից կառավարություններից և ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրանց անգամ մեկ գումարտակով»: Նա շատ լավ հասկանում էր, որ անհնարին է փորձել նոր Հայաստան կառուցել թղթի վրա՝ առանց նրան աջակցելու:

Մեծ պետությունների նման քաղաքականությունը նկատի ունենալով՝ Լեոն գրում էր. «... այլևս ոչ մի հավատ չունեմ մեր հարցի մասին և բոլորովին անմիտ, վնասակար եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը Ամերիկա կամ Պապին դիմումները մամուլին այդ բոզերի ռեակցիան... դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը և Ազգերի լիգայի կեղծավորությունը...Վերջացած է ամեն ինչ... նոր ուղիներ պետք է փնտրել» [Լեո,Թիֆլիս, 1925, 137]:

Այսպիսով՝ վերը ներկայացվածից եզրակացնում ենք, որ փաստորեն հաղթում է ոչ թե հայ ժողովրդի փրկության, այլ մեծապետական եսասիրական շահը, որի ուղղակի հետևանքն էր այն տարօրինակ երևույթը, որ պատերազմում պարտված Թուրքիան հետպատերազմյան դիվանագիտական մարաթոնից հաղթող դուրս եկավ, կարողացավ ռազմաքաղաքական միջոցներով սրբագործել հայերի ցեղասպանությունը և նրանց մի կերպ փրկված փշրանքներին զրկել հայրենիք ունենալու իրավունքից:

Ըստ էության միջազգային վեհաժողովները Սևրից հետո մեկը մյուսի հետևից հայ պատվիրակների և ժողովրդի ազատագրական երազանքները տարան դեպի փակուղի: Իհարկե, ճիշտ չի լինի միայն հայ դիվանագետների բացակայությանը վերագրել Հայկական հարցի լուծման ձախտողումը: Ըստ հայտնի պատմաբան Նիկողայոս Ադոնցի՝ թուրքերը պետք է անսահման շնորհակալ լինեն եվրոպական դիվանագիտությանը, որը պաշտպանելով օսմանյան հողերի անձեռնմխելիությունը, Թուրքիայի փլուզումը կասեցրեց մի ամբողջ հարյուրամյակ:

1918-1920 թվականներին անվանի պատմաբանն իր հողվածներում ջախջախիչ քննադատության է ենթարկել դաշնակիցների քաղաքականությունն ինչպես Հայկական հարցում (բոլոր առումներով), այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ ընդհանրապես:

Վերը շարադրվածից հանգում ենք այն եզրակացության, որ հայկական պատվիրակություններն իրենց գործունեության ընթացքում հիմնականում քարոզչական աշխատանք էին կատարում Հայկական հարցի, հովանավորության լուսաբանման, հայկական պահանջների հիմնավորման և մեր խնդիրների նկատմամբ արևմտյան քաղաքական գործիչների համակրանքը շահելու ուղղությամբ: Նրանց գործունեությունն ուղղված էր նաև հանրային կարծիքի ձևավորմանը ոչ միայն մամուլում, այլև Փարիզի, Լոնդոնի, Հռոմի, Վաշինգտոնի և այլ վայրերի պաշտոնական շրջանակներում:

Սակայն, մեր կարծիքով, հայկական պատվիրակությունները հանձինս Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբարի մեր երկրին վերաբերվող բոլոր հարցերի առնչությամբ, սկզբից ևեթ չունեին միացյալ, սկզբունքային տեսակետ: Նրանցից յուրաքանչյուրը հանդես էր գալիս իր

պատվիրակության անունից, հաճախ իրարից տարբեր հարցադրումներով, հետևաբար՝ լուրջ չէր ընդունվում մեծ պետությունների քաղաքական շրջանակների և դիվանագետների կողմից:

Նրանց համագործակցությունը շատ ավելի ձևական էր, քան իրականում կար: Երկու պատվիրակությունների միջև գոյություն ունեցող պայքարը ոչ միայն աննկատ չմնաց դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից, այլև լայն արձագանք ունեցավ և անհետևանք չմնաց:

Ճիշտ է՝ ՀՀ պատվիրակությունը ավելի համեստ և հայ ժողովրդի տվյալ պահի իրատեսական հնարավորություններից բխող պահանջներ ներկայացրեց: Միաժամանակ, Ավ. Ահարոնյանը նախընտրելի էր համարում Հայաստանի հովանավորությունը հանձնել այնպիսի պետության, որը շատ չէր միջամտի երկրի ներքին գործերին:

Բայց և այնպես, ինչպես ժամանակին գրել է «Ժողովուրդ» թերթը. «Հայ ժողովուրդը շատ է կարոտ խելացի և զգուշ դիվանագիտության, հայ ազգն ունի լավ դիվանագետներ, սակայն կառավարությունն է մեզ գրկել նրանցից: Ինչ անենք, մեր դիվանագիտությունը այդպես խեղճ է, ողորմելի և պատճառը հայ ժողովրդի պարտությունների...» [Ժողովուրդ, 7 նոյեմբերի 1920, 181]:

Ակնհայտ է, որ հայ պատվիրակները և ազգային գործիչները դասեր չէին առել անցյալից և շարունակում էին հավատալ երկերեսանի ու ապերախտ եվրոպացիներին: Նրանք չէին ուզում ընդունել, որ ժողովրդավար կոչվողները կարող են սեղմել թուրքերի արյունոտ ձեռքը և մոռանալ իրենց փոքր դաշնակցին, որն ավելի շատ արյուն էր թափել այդ պատերազմում, քան եվրոպական որևէ մեծ պետություն:

Եվ այնուամենայնիվ, ինչպես վկայում են այդ ժամանակի փաստերը, ամերիկյան հովանավորությանը հավատաց ամբողջ հայ ժողովուրդը, այդ թվում՝ առաջին հերթին հայկական երկու պատվիրակությունների ներկայացուցիչները: Եվ զարմանալին այն է, որ նույնիսկ Ավետիս Ահարոնյանն էր լավատես բոլորի նման՝ կարծելով, որ ԱՄՆ-ի նախագահը ոչ միայն կվերցնի Հայաստանի հովանավորությունը, այլև կիրագործի Սևրի դաշնագրով նախատեսված մեծ Հայաստանի ստեղծումը:

Ամերիկյան հովանավորությանը հավատացին Պողոս Նուբարը, նույնիսկ արևմտահայ գործիչներն ու ամենափորձված, ճանաչված դիվանագետները, ինչպես օրինակ Գաբրիել Նորատունկյանը, ով հորդորում էր՝ «Ֆրանսիայի փեշից բռնել», նրան վստահելով և՛ Հայկական հարցի լուծումը, և՛ Հայաստանի հովանավորությունը:

Վիլսոնյան հովանավորությանը, կարծում ենք, սկզբում հավատում էին նաև մեծ, դաշնակից երկրների կառավարությունները, քաղաքական գործիչները, դիվանագետները:

Միգուցե հենց այդ ընդհանուր հավատը, ԱՄՆ-ի նախագահի հայամետ դիրքորոշումը, ընդհանուր առմամբ ամենաաղետալի հետևանքն ունեցան Հայաստանի հովանավորության համար:

Ասվածն ամփոփենք «Դրոշակ»-ի հետևյալ նկատառումով. «... թե ամեն բանն առաջ եւ վեր պետք է արթուն գտնուիլ Հայաստանի եւ հայ ժողովրդի արտաքին թշնամիներուն դեմ, որոնց սպառնալիքները դիմագրաւելու հրամայականին պէտք է ստորադասուին մնացեալ ամեն նկատառում եւ ներքին տարակարծութիւն» (Դրոշակ, 1986,30):

Այժմ էլ արդիական է մեծ հայրենասեր, ազգային, քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանի լավատեսությունը մեր ժողովրդի ապագայի նկատմամբ: Նա գրում էր. «Գնա, հայ ժողովուրդ,

Հայկական պատվիրակությունները և Հայաստանի հովանավորության խնդիրը

քալե... Դեռ սպառուած չեն մեր յույսերը, դեռ կորած չէ մեր Հայրենիքը... Մենք դեռ կը պայքարենք եւ պիտի յաղթենք» [Հայրենիք, 1930, 7,79]:

Այս ամենը վերլուծելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ Հայաստանի հովանավորության առումով, միջազգային փաստաթղթերում այժմ էլ իրավական ուժ ունի Իրավարար վճիռը, որը դե յուրե գոյություն ունի նաև այսօր: Այլ հարց է, որ մինչև այժմ այն չի իրագործվել:

Իրավարար վճիռը հնարավոր է իրականացնել, բայց դրա համար պետք է կատարել նպատակամղված, հետևողական աշխատանք՝ միաժամանակ ընտրելով բարենպաստ պայմաններ նաև աշխարհաքաղաքական առումով:

Եզրակացություն: մեր կարծիքով, 21-րդ դարի առաջին տասնամյակներին էլ հայ ժողովրդի համար զարթուցիչ կոչ է հնչում Նիկողայոս Ադոնցի հետևյալ միտքը. «...Հայաստանը չի կարող հրաժարվել իր անցյալից կամ ապագայից» [Ադոնց Ն., 1989, էջ 111]: Ահա թե ինչու է անհրաժեշտ քաղաքական, ռազմական, տնտեսական առումով հզորացնել, ամրացնել մեր երկիրը և՛ ներսից, և՛ դրսից: Դիվանագիտական լուրջ հարաբերություններ հաստատել հարևան, բարեկամ և Հայաստանի հետ ազնիվ շահեր ունեցող բոլոր երկրների հետ: Ճիշտ օգտագործել երկրի ներսի և Հայկական սփյուռքի ներուժը, նրանց ներգրավել երկրի կառավարման և ՀՀ արտաքին հարաբերությունների բոլոր օղակներում: Մեր կարծիքով, միայն այդ դեպքում խուսափելով նախկին սխալներից և օգտագործելով մեր տարածաշրջանում հայոց պետության համար գոյություն ունեցող օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունները, ստիպված չենք լինի փնտրել հովանավոր պետություն: Միանգամայն իրավացի էր Ադոնցը, քանի որ կարծում էր Հայկական հարցի լուծման ամեն հետաձգում հղի է սարսափելի հետևանքներով հայ ժողովրդի ճակատագրի համար [Ադոնց Ն., 1989, էջ 17]:

Գրականության ցանկ

Ադոնց Ն., 1989, Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., էջ 111:

Ադոնց Ն., 1989, Հայկական հարցը Սևրում, Ե., էջ 17:

Ահարոնեան Գ., 1986, Մեծ երազի ճամբուն վրայ, Լոս-Անճելաս, էջ 117:

Ահարոնյան Ա., 1943, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բոստոն, էջ 111:

Գալոյան Գ., 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923:

Դրոշակ, հունիս (11-25), 1986, էջ 30:

Եսայան Ա., 1965, Հայկական հարցը եւ միջազգային դիվանագիտութիւնը, Ե., էջ 194:

Թերզիպաշյան Ա., 1939, Նուպար, Փարիզ:

Ժողովուրդ, 1 դեկտեմբերի, 1918, N39:

Ժողովուրդ, 16 սեպտեմբերի, 1920, N154:

Ժողովուրդ, 6 հունիսի, 7 նոյեմբերի 1920:

Ժողովուրդ, 6 հուլիսի, 1920, էջ 106:

Ժողովուրդի ձայնը, 10-23 ապրիլի, 1919:

Ժողովուրդի ձայնը, 12-25 մարտ, 1919:

Ժողովուրդի ձայնը, 26 փետրվար, 10 մարտ, 1920:

Լեո, 1925, Անցյալից, հայոց հարցը, Թիֆլիս, էջ 137:

Խուրշուդյան Լ., 1995, Հայկական հարցը, Ե.:

Կիրակոսյան Ջ., 1972, Սան-Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, Ե.:

ՀԱԱ, ֆ. 200, մաս 1, գ. 290, թ. 4, 84, 125, 127, 143 – 145:

ՀԱԱ, ֆ. 200, մաս 1, գք. 90, թ. 144-145:

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1826 – 1923), Ե., 1972, էջ 669, 672:

Հայկազեան Հայագիտական հանդես, հ. 2, Պեյրուի, 1977, էջ 75:

Հայկական հարց հանրագիտարան, Ե., 1996, էջ 216-217:

Հայրենիք, մայիս, 1930, N 7, էջ 79:

Հովհաննիսյան Ռ., 2005, Հայաստանի հանրապետություն, հ. 2, 3, Ե.:

Յուշամատեն, էջ 1017:

Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., 2003, հ. 3, գիրք 2, Հայկական հարցը 1920-1922:

Պողոսեան Ս., 2005, Պողոս Նուպարը, և Հայկական հարցի զարգացումները, Հանդես Ամսօրեայ, Վ., էջ 417-446:

Միմոնյան Հր., 1968, Սփիւռքահայութիւնը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Ե., էջ 580:

Վեմ (Հանդես մշակույթի և պատմության), Փարիզ, 1934, N5, էջ 9, 10, 17:

Վրացյան Ս., 1920, Բանակցություններ Ազգային պատվիրակության և ՀՀ միջև, Պոսթըն:

Վրացյան Ս., 1993, Հայաստանի Հանրապետություն, էջ 364, 365:

Տեր-Հակոբյան Հ., 1921, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս:

Ուխտ Արարատի, մայիս-հունիս 2011, թ.1, էջ 4:

Борьян А., 1929, Армения, международная дипломатика и СССР, часть 2, М.-Л., с. 66.

Международное право в избранных документах, т. 2, М., 1957, с. 82-83.